ԵՎՐԱՍԻԱ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հայաստան

Կազմակերպական կարողությունների զարգացում

Ծրագրի նպատակը՝ *զարգացնել հասարակական կազմակերպությունների, քաղաքապետարանների և լրատվամիջոցների կազմակերպական կարողությունները՝ կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու համար:*

Շատ միջազգային դոնոր կազմակերպություններ աջակցում են Հայաստանի հասարակական կազմակերպություններին՝ ֆինանսներ հայթայթելու, ծրագրեր իրականացնելու և ղեկավարելու հմտություններ ձեռք բերելու համար: Այնուամենայնիվ, 2004թ. «Համաշխարհային ուսուցում կազմակերպության կատարած ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ Հայաստանի շատ հասարակական կազմակերպությունների մոտ դեռևս նկատվում է աշխատանքների արդյունավետության անկում:

2006 թ. Եվրասիա համագործակցություն հիմնադրամը մեկնարկեց «Կազմակերպական կարողությունների զարգացում ծրագիրը, որն ուղղված է հասարակական կազմակերպությունների, քաղաքապետարանների ու լրատվամիջոցների կազմակերպական կարողությունների զարգացմանը: Հիմնադրամի աշխատակիցներն անցկացնում են կազմակերպական կարողությունների գնահատման աշխատանքներ, որի արդյունքում ուսումնասիրում են այն ոլորտները, որոնց զարգացումն էական նշանակություն ունի կազմակերպությունների աշխատանքն արդյունավետ կազմակերպելու և ծառայությունները բարելավելու համար: Ուսումնասիրության արդյունքում արված առաջարկներն օգնում են գործակից կազմակերպություններին մշակելու գործողությունների ծրագրեր՝ուղղված ներքին աշխատանքային ընթացակարգերի ու կարողությունների զարգացմանը: Գործողությունների ծրագրերի իրականացման ընթացքում հիմնադրամը շարունակաբար խորհրդատվական աջակցություն է տրամադրում յուրաքանչյուր կազմակերպությանը:

Սույն ծրագիրը կազմում է Եվրասիա համագործակցություն հիմնադրամի բոլոր ծրագրերի բաղկացուցիչ մասը և հեփամուտ է բարելավելու դրամաշնորհառուների կազմակերպական կայուն գործելակերպը:

Կազմակերպության գնահատում

Կիրառելով «արժեքավորման հարցում մեթոդը՝ Եվրասիա համագործակցություն հիմնադրամը, առաջին հերթին, հանդիպում է կազմակերպության ներկայացուցիչների հետ և զրուցում կազմակերպության ուժեղ կողմերի ու ձեռքբերումների մասին: Այնուհետև, հիմնադրամի աշխատակիցները փվյալ կազմակերպության աշխատակազմի հետ միասին ուսումնասիրում և գնահատում են կազմակերպության ռազմավարությունը, կառուցվածքն ու հետևյալ համակարգերը.

- վարչարարություն
- պլանավորում
- ծառայությունների մատուցում
- հաղորդակցություն
- մարդկային և ֆինանսական ռեսուրսների կառավարում
- մարկետինգ

Գործողությունների ծրագիր

Կազմակերպական կարողությունների գնահատման աշխատանքների ավարտից հետո Եվրասիա համագործակցություն հիմնադրամի աշխատակիցներն իրենց դիտարկումների վերաբերյալ զեկույց են պատրաստում և ներկայացնում համապատասխան գործակից կազմակերպությանը: Զեկույցը հիմք է հանդիսանում՝ սկսելու առաջարկների իրականացման շուրջ քննարկումները, որի ժամանակ հիմնադրամի օգնությամբ, փվյալ գործակից կազմակերպությունը մշակում է գործողությունների ծրագիր: Այն ներառում է գործողությունների համակարգված շարք, որի իրականացման արդյունքում ակնկալվում է բարելավել ծառայությունների մատուցման որակն ու աշխատանքների արդյունավետ կատարումը:

Եվրասիա հիմնադրամը մասնավոր կառավարվող, ոչ շահութաբեր կազմակերպություն է, որին աջակցում են ԱՄՆ կառավարությունը և այլ դոնորներ: 1992 թ-ից ի վեր Եվրասիա հիմնադրամը ներդրել է ավելի քան 370 միլիոն ԱՄՆ դոլար և իրականացրել ավելի քան 8400 դրամաշնորհային և տեխնիկական աջակցության ծրագրեր Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Ղազախստանում, Ղրղզստանի Հանրապետությունում, Մոլդովայում, Ռուսաստանում, Տաջիկստանում, Թուրքմենստանում, Ուկրաինայում և Ուզբեկստանում: Սկսած 1992 թ-ից՝ Եվրասիա հիմնադրամը Հայաստանում ներդրել է ավելի քան 30 միլիոն ԱՄՆ դոլար:

Եվրասիա համագործակցություն հիմնադրամը Եվրասիա հիմնադրամի հետնորդ կազմակերպությունն է:

Սույն հրատարակությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի նվիրատվության շնորհիվ, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) աջակցությամբ, որի բովանդակության համար պատասխանատու է Եվրասիա համագործակցություն հիմնադրամը: Այստեղ արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ համընկնեն ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կամ ԱՄՆ կառավարության տեսակետներին:

USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ

Աջակցություն գործողությունների ծրագրի իրականացմանը

Գործողությունների ծրագրի իրականացման ընթացքում Եվրասիա համագործակցություն հիմնադրամը շարունակաբար փրամադրում է խորհրդատվական աջակցություն և անհրաժեշտության դեպքում՝ օգնում խորհրդականների ընտրության հարցում: Որոշ կազմակերպություններ կարող են նաև դրամաշնորհ ստանալ՝ գործողությունների ծրագրերն իրականացնելու համար: Յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ Եվրասիա համագործակցություն հիմնադրամը նախատեսում է անցկացնել ևս մեկ ուսումնասիրություն՝ գնահատելու փվյալ գործակից կազմակերպության կազմակերպական կարողությունների զարգացման աստիճանը:

2006 թ. Եվրասիա համագործակցություն հիմնադրամն ընտրեց վեց գործակից կազմակերպություն՝ մասնակցելու «Կազմակերպական կարողությունների զարգացում ծրագրին: Դրանցից հինգն ստացել են դրամաշնորհային աջակցություն՝ գործողությունների ծրագրերն իրականացնելու համար: Այդ գործակից կազմակերպություններն են՝

- Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միությունը
- Հայաստանի մայրության կենտրոն հ/կ
- ՀՀ Գեղարքունիքի մարզի առևտրա-արդյունաբերական պալատը
- Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության «Ունիսոն հ/կ
- Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոնը
- «Դիլնետ սերվիս կրթական հ/կ

Կատարած աշխատանքների արդյունքում.

- Չորս գործակից կազմակերպություններ իրենց համայնքներում կարիքի գնահատման աշխատանքներ են իրականացրել
- Երեք նոր ծառայություններ են մշակվել գործակից կազմակերպությունների կողմից
- Երեք կազմակերպություններ վերանայել են իրենց կառավարման կառուցվածքը և ընդգրկել նոր անդամներ կառավարման մարմիններում
- Երկու կազմակերպություն Հայաստանի մարզերում հիմնել են երեք մասնաճյուղեր
- Գործակից կազմակերպությունները հայթայթել են ավելի քան 70000 ԱՄՆ դոլար
- Ավելի քան 65 կամավորներ և նոր անդամներ են համալրվել գործակից կազմակերպություններում

2007թ. Եվրասիա համագործակցություն հիմնադրամն ընտրելու է վեց նոր կազմակերպություն՝ ծրագրի երկրորդ փուլին մասնակցելու համար:

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Նունե Սարգսյան
Ինտերնյուս-Հայաստան

Արտաշես Թերզյան
Investment Bank Trust,
National Bank Trust,
Ռուսաստան

Մարգարիտա Փիլիպոսյան
Հայ օգնության ֆոնդ

Դավիթ Հովհաննիսյան
Երևանի պետական
համալսարանի մշակույթի և
քաղաքակրթության կենտրոն

Արա Համազասպյան
«Իզմիրլյան հիմնադրամի
երևանյան գրասենյակ

Արսեն Ղազարյան
Հայաստանի
արդյունաբերողների
և գործարարների միություն

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝

Եվրասիա համագործակցություն
հիմնադրամ

Հասցե՝ 0009, ՀՀ, ք. Երևան,
Զարոբյան փ. 56
Հեռ.՝ (374 10) 58 60 95
Ֆաքս՝(374 10) 58 60 96

info@epfound.am
www.epfound.am